

Д. Ведребисели (Д. Е. Маліева) «Нетронутый уголок» — грузинские рассказы. Т. I СПБ. 1903

Այս համալիրի պատմութեան հեղինակը նշանաւոր գրող չէ, ոչ էլ աչքի ընկնող վիպական տաղանդի տէր մի անձն. այնուամենայնիւ նա խօսում է այնպիսի մի առարկայի մասին և այնպէս ճշգրիտ, որ իսկոյն դարձրեց ամբողջ ռուս մամուլի ուշագրութիւնը: Նա բաց արեց ռուս ընթերցողի առաջ մի անկիւն, որ իսկի ծանօթ չէր ոսկերին և ցոյց տուեց նրանց այն խղճով կացութիւնը, որի մէջ դարերէ ի վեր մնում է վրացի գիւղացին: Տնտեսական քայքայումն, լուսաւորութեան բացակայութիւն, ինտէլիգէնտ ոյժերի պակասութիւն, այլասեւումն և ապիկարութիւն— ահա այն գծերը, որով հեղինակը նկարում է ձեր առաջ գիւղացիների, խեղճ խիզանների, սնանկացած, կիսավայրենի իշխանների, տգէտ վրացուհիների նիստ ու կացը: Բարի, համբերող, քչով բաւականացող, բայց ճանապարհից չեղուած վրացին— հեղինակի նկարագրութեամբ— հանդիսանում է ձեր առաջ իբրև ժամանակի և դէպքերի զոհ: Եկաւ նոր կեանքը, նոր կուլտուրան, նոր օրէնսդրութիւնը և շարունակ գիւղացին մնաց անօգնական, առանց ղեկավարի՝ չքեղ բնութեան գրկում, որտեղ ամեն ինչ կայ, բայց ոչ մէկը նրան չի պատկանում: Այդ ողբերգական դրութիւնը արդեօք մեր գիւղացու՞ն էլ ծանօթ չէ: Անշուշտ որոշ կողմերով և որոշ չափով: Յամենայն դէպս վրացիները մեր գրացիներն են և նրանց վիճակը կարող չէ մերինին նման չլինել: Այդ գիրքը արժէ կարգաւ և մի քանի պատմութեան նոյն իսկ թարգմանել: օրինակ «Семейное событие» և «Хизаны»: Պատմութեան մէկի մէջ (կնուէք) դուրս է բերուած մի հայ վաճառական և բաւականին տիպիկ գոյներով է նկարագրուած, թէպէտ և այնքան էլ համալիրի չէ դուրս բերուած: սակայն այդ հայն (Յակոբջան) կարծես միակ մարդն է ամբողջ հատորի մէջ, որ իր ունեցածը բազմապատկում է և ոչ թէ քէֆ անելով քամուն տալիս: Վերջապէս հեղինակի արժանաւորութիւնը նրանումն է, որ նա ըստ կարելոյն օրիէկտիւ է նկարագրում և պատմում ու տասը պատմութեան մէջ կարողանում է մեզ ծանօթացնել՝ գիւղացի բանուորների ու հողատէրերի հետ, քահանաների ու տիրացուների, ծեր և ջահիլ կանանց, իշխանների և կիսաճորտերի հետ:

ՄԻՆ. ԲԵՐԱՅԵՐՈՒՆ